



891.85-93  
U-40

ՅԵՐԵԺԻՇ  
ՅԵՆԿՈՆ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉ

th.1



30 MAY 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՈՐԴՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք.



ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉ

# ՅԵՐԱԺԻԾ ՅԱՆԿՈՆ

Թարգմ. Ա. ԶՈՐՅԱՆ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1925,

30 JUL 2013

3962



## ՅԵՐԱԺԻՇՏ ՅԱՆԿՈՆ

1.

Նա աշխարհ յեկավ հիվանդոտ, վտիտ մարմնով։ Հարեւանուհիները, վոր հավաքվել եյին ծննդկան մոր անկողնու շուրջը հուսահատ շարժում եյին գլուխները մոր և յերեխայի վրա։

— Զե, ես յերեխեն ապրելացուկ չի, ասում եյին նրանք, Բայց յերեխան ապրեց և նրա անունը դրին Յանկո։ Յանկոն մի կերպ տասը տարեկան դառավ։

Նա նիհար եր և արեառ դեմքով, ուռած փորով և ներս ընկած այտերով։ Չեկ, գրեթե սպիտակ մազերը կախված եյին պայծառ չոված աչքերի վրա, վոր աշխարհին նայում եյին այնպես, ինչպես անսահման մի տարածության։

Զմեոր մեծ մասամբ նստում եր նա վառարանի մոտ և լալիս ցրտից, ամենք գուցե և սովոր, յերբ մայրիկը վոշինչ չեր ունենում վառարանի կամ չանախի մեջ յեփելու։ Ամառը նա ման եր գալիս շապկանց կամ ծղոնտե զլխարկով, վորի պատրուտված յեզրերի տակից նա նայում եր թոչունի պես գլուխը վեր ցցած։

Մայրը, վոր աշխատում եր որավարձով և ապրում որը որին ինչպես մի ծիծեռնակ ոտար տանիքի տակ, գուցե և սիրում եր վորդուն, բայց հաճախ ծեծում եր նրան։

№ 234.

Գրառեպվար № 1974.

Տիրաժ 4000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում։

Ութը տարեկան Յանկոն արդեն տավարածի ոգնական եր. յերբ խրճիթում ուտելու բան չեր լինում, գնում եր անտառը սունկի: Նա մի շատ ամաչկոտ տղա յեր և կողմնակի մարդկանց հետ խոսելու ժամանակ մատը միշտ բերանն եր կոխում:

Վոչ-վոք չեր կարծում, թե Յանկոն կը մեծանա ու մանավանդ մայրը կը միխիթարվի նրանով, վորովհետեւ նա աշխատանքի անընդունակ եր:

## 2.

Հայտնի չե՛ վորտեղից եր և ինչպես, Յանկոն մեծ սեր ուներ յերաժշտության: Նա ամենուրեք լսում եր այն, իսկ յերբ փոքր ինչ մեծացավ, ել վոչ մի ուրիշ բանի մասին չեր մտածում:

Կը պատահեր, կերթար անտառ տավարի յետեկից կամ պըտուղների, բայց կը վերադառնար առանց պտղի և կասեր շընջալով.

— Մայրիկ, այստեղ՝ անտառում ինչ-վոր մեկը բան եր ածում... պահ, պահ...

— Յես քեզ ածել ցույց կը տամ,—ասում եր մայրը,—սպասիր մի...

Յեվ, իսկապես, մայրը յերբեմն յերաժշտություն եր ցույց տալիս նրան՝ մեծ գղալը նրա ճակատին զարկելով: Յանկոն լալիս եր և խոստանում, վոր այլիս չի անի, բայց հենց այդ ժամանակ մտածում եր ելի այն մասին, թե ինչն ե արդյոք նվազում այնտեղ՝ անսառում... Ի՞նչը, ի՞նչ իմանաս: Յեղենիները, սոճիները, կեչիները, թխկիները—բոլորը, բոլորը նվազում եյին. ամբողջ անտառը նվազում եր:

Արձագանքը նույնպես... Դաշտում յուրաքանչյուր խոս նվազում եր նրա համար՝ պարտիզում՝ խրճիթի մոտ ծտերը ճըռվողում եյին այսպես, վոր կեռասները գողդողում եյին ծառի վրա: Յերեկոները նա ականջ եր դնում զյուղի բոլոր ձայներին և, գուցե, թվում եր նրան, վոր ամբողջ զյուղը յերգում ե: Յերբ նրան ուղարկում եյին փեյին շաղ տալու, նա լսում եր, վոր յեղանների վրա ել նվազում ե քամին:

Մի անդամ, յերբ նա ցրված մազերով կանգնել լսում եր նվազը փայտե յեղանների վրա, վերակացուն նկատեց այդ և կաշ- վե գոտին արձակելով՝ մի լսվ խրատ տվեց նրան։ Բայց դա ոգուտ չարավ։ Մարդիկ նրան անվանում եյին «Յերաժիշտ Յանկո»։ Գարնանը նա փախավ տնից, վոր շվիներ շինի գետի մոտ։ Գիշերը, յերբ գորտերը սկսում եյին կռվուլ, փայտվու- թիկը կըտկացնել, բգեցները բզզալ, աքլորները կանչել—նա ընել չեր կարողանում. ականջ եր դնում միայն։

## 3.

Գիշերապահը, վոր գիշերները շրջում եր գյուղում և, չը- քնելու համար՝ աստղեր եր համարում ու շների հետ խոսում, հաճախ տեսնում եր Յանկոյի սպիտակ շապիկը, վոր մթան մեջ գնում եր գեղի գինետուն։

Բայց տղան գինետուն չեր մտնում։ Նա կանգնում եր դուրսը և, պատի մոտ կուչ յեկած, լսում։ Ներսը մարդիկ պա- րում եյին։ Լսվում եյին վոտքերի տրոփյուն և ուրախ ձայ- նել։ Զութակները մեղմ յերգում եյին, իսկ թավջութակը յեր- բեմնակի ձայնակցում եր նրանց։ Լուսամուտներում լույս-կրակ եր վառվում, և թվում եր թե գինետան ամեն մի գերան դո- դում ե, յերգում, նվագում։ Յեվ Յանկոն լսում եր շարունակ...

Ինչեր ասես չեր տա նա այն ջութակին, վոր նվագում եր՝ այդպես նուրբ։ Այդպիսի յերգող տախտակներ... Վորտե- ղից են ձեռք բերում։ Ո՞վ ե շինում արդյոք։ Յեթե մի անգամ գոնե թույլ տային իր ձեռքում մի այդպիսի բան բռնելու։ Ուր ե թե։ Յանկոն կարող եր միայն ականջ դնել, այն ել այնքան ժամանակ, մինչեւ վոր գիշերապահը կը գոռար մթան միջից։

— Տուն ես գնալու թե չե, սատանի ճուտ։

Այդ ժամանակ նա, վորքան վոտքերում ուժ ուներ, վա- զում եր տուն, իսկ նրա յետերից լավում եր դեռ ջութակի նուրբ նվագը և թավջութակի բամբ ձայնը։

## 4.

Մեծ տոն եր լինում Յանկոյի համար, յերբ կարողանում եր մի տեղ ջութակ լսեր, որինակ, հարսանիքում կամ յերեկութներին, Նա կուչ եր գալիս վառարանի յետև և նայում կատվի նման վառվող աչքերով:

Յեզ մի որ ահա նա ինքն իր համար ծառի կեղեից և ձիու ձարից ջութակ շինեց. բայց դա գինետան ջութակի պես լավ չեր նվազում: Դա բարակ, շատ բարակ ձայն եր հանում, ինչպես ճանճը կամ մոծակը: Այնուամենայնիվ Յանկոն առավոտից մինչև յերեկոն նվազում եր, թեև դրա համար ծեծ եր ուտում միայն: Են, ինչ արած—այդպես եր նրա բնավորությունը:

Յանկոն ավելի ու ավելի նիհարում եր, մազերը թանձրանում եյին, աչքերը չովում ավելի, թեև հաճախ լցվում եյին արցունքներով, իոկ այտերն ու կուրծքը հո՛ որեցոր փոս եյին լինկում:

Նման չեր Յանկոն ուրիշ յերեխաների. Նա ավելի շուտ նման եր իր ջութակին, վոր հազիվ ճրգճզում եր: Հետո, նոր հացը դուրս գալուց առաջ նա, քիչ մնաց սովից մեռներ, վորովհետեւ շարունակ հում գազար եր ուտում և... այլովում եր ջութակ ունենալու ցանկությամբ:

## 5.

Այդ ցանկությունը, սակայն, բարիք չբերեց նրան: Կալվածատիրոջ սպասավորը մի ջութակ ուներ, վոր մեկմեկ նվազում եր: Յանկոն յերբեմն կոատուկների միջով սոզում եր դեպի կալվածատիրոջ սեղանատան բաց գուռը՝ ջութակին նայելու: Ջութակը կախված եր պատին, դռան դիմաց. Յանկոն ագանորեն նալում եր այդ՝ իրեն համար անհասանելի սրբության, վորին ձեռ տալու բախտին չեր արժանանում: Բայց նա սաստիկ ցանկանում եր այդ բանը, նա ուզում եր գոնե մի անդամ իր ձեռն առնել ջութակը և մի լավ զննել: Ու նրա փոքրիկ թշվառ սիրալ դոզում եր այդ ցանկությունից:

Մի անգամ յերեկոյան սեղանատանը վոչ վոք չկար. կածավատերը վաղուց ապրում եր արտասահմանում. հարուստ տունը մնացել եր անբնակ, այդ պատճառով սպասավորն իր ժամանակի մեծ մասն անց եր կացնում գուըսը:

Յանկոն կոատուկների մեջ թագնված վաղուց արդեն սեղանատան բաց գոնից նայում եր իր բոլոր ցանկությունների նպատակին: Բոլորակ լուսինը շեղակի շողերով լուսավորում եր սեղանատան բաց լուսամուտը, վոր մեծ լուսավոր քառակուսու նման անդրադառնում եր դիմացի պատին: Այդ քառակուսին կամաց-կամաց մոտենում եր ջութակին, և, վերջապես, ամբողջովին լուսավորեց նրան:

Մթության մեջ կանգնած Յարկոյին թվում եր թե՝ ջութակից ինչ-վոր արծաթե լույս և թափվում. նրա գուըս ընկած մասերն առանձնապես այնքան ուժեղ եյին լուսավորված, վոր Յանկոն հազիվ եր կարողանում նայել: Յեզ ջութակի ա-

մեն ինչը պարզ յերևում եր այդ փայլածո լուսի մեջ—թե դեպի ներս թեքված կողերը, թե լարերը և թե կեռ կոթը: Նրա ունկերը լույս եյին տալիս ինչպես կայծոռիկներ. իսկ նրա ջութակի յերկարությամբ կախված աղեղը նմանում եր արծաթե ճիւղուի:

Այս, այդ բոլորը վորքան գեղեցիկ և կախարդիչ...

Նայում եր Յանկոն հետզհետե աճող ագահությամբ: Կոտուկների մեջ թագնված, արմունկներով հենված իր վտիտ ծնկներին, նա՝ բերանը բաց, աչքերը հառել եր ջութակին:

Վախը թույլ չեր տալիս տեղից շարժվելու, բայց մի ինչ-վոր զորավոր ույժ Յանկոյին մղում եր առաջ: Իսկ լուսավորված ջութակը կարծես լողում, գալիս եր դեպի Յանկոն... Ժամանակ առ ժամանակ մթագնում եր նա և նորից բոցավառվում:

Այդ ժամանակ քամին փչեց, ծառերը սոսափեցին կամաց, կոտուկները շնչյուն բարձրացրին, և Յանկոն լսում ե ահա.

— Գնա, Յանկո, մարդ չկա: Գնա...

Գիշերը պայծառ, պայծառ եր: Այգում ճակի մոտ սոխակը յերգեց. նա մերթ կամաց, մերթ բարձր շվշպացնում եր.

— Շնւտ, գնա, վերցրու, շնւտ, շնւտ...

Ահագին բուն անցավ Յանկոյի գլխավերեկց և ճչաց.

— Մի, Յանկո, մի...

Բայց բուն թուավհեռացավ, իսկ սոխակը մնաց, և կոտուկներն ավելի ու ավելի պարզ շնչում եյին.

— Զկա, Յնակո, այնաեղ մարդ չկա...

Զութակը նորից փայլեց:

Խեղճ Յանկոն զգուշությամբ շարժվեց առաջ, իսկ սոխակը մեղմ շվշպացրեց ելի.

— Շնւտ-շնւտ, գնա, վերցրու, շնւտ-շնւտ...

Սպիտակ շապիկը յերեաց սեղանատան դռների մեջ: Սկ կոտուկներն այլես չեն ծածկում նրան: Շեմքում լսվում ե նրա ընդհատվող շնչառությունը: Ցեփս մի ակնթարթ՝ սպիտակ շապիկը չքացավ:

— Ի զուր, բու, նորից յեկել ու կանչում ես՝ «Մի, մի...» Յանկոն ներսն ե արդեն:

## 6.

Գորտերն այդ միջոցին բարձր կուպացին. կարծես ինչ-վոր բանից վախեցած, ու հանկարծ լռեցին: Սոխակը դադարեց յերգելուց, կուտուկները շշնջալուց: Իսկ Յանկոն կամաց-կամաց առաջ եր շարժվում վախով պաշարված:

Կուտուկների մեջ նա իրեն զգում եր ինչպես տանը, իսկ այստեղ, ինչպես վանդակի մեջ ընկած: Նրա շարժումները դարձան ընդհատ, շնչառությունը արագացավ և, ապա, խավարը ծածկեց նրան: Ամառային մեղմ փայլակը շողաց յերկնքում և լուսավորեց սենյակի ներսն ու չորեքթաթ Յանկոյին ջութակի առաջ. գլուխը վեր բռնած: Բայց փայլակը հանգավ, ամպերը ծածկեցին լուսինը, և վոչինչ այլևս վ՞հ տեմնվում եր, վոչ լըսվում:

Քիչ հետո խավարի մեջ հնչեց մեղմ ու տխուր մի ձայն մեկն ասես անգգույշ դիպավ լարերին և հանկարծ...

Մի ինչ-վոր կոպիտ, քնառ ձայն, վոր դալիս եր անկյունից հարցրեց բարկացած.

— Ո՞վ ե այդտեղ...

Յանկոն շունչը պահեց: Բայց կոպիտ ձայնը հարցրեց նորից.

— Ո՞վ ե այդտեղ...

Յեվ ապա ինչ-վոր մեկը լուցկի քսեց պատին, սենյակը լուսավորվեց, ու հետո լսվեցին հայնոյանքներ, հարվածներ, յերեխայի լաց, ճիչ, շան հաջոց. լուսամուտներում յերեաց մոմի լույս ու ամբողջ տունը լցվեց աղմուկով:

## 7.

Հետեւալ որը Յանկոն կանգնած եր դատարանում:

Տանուտերը և գյուղի դատավորները նայում եյին նըան. իսկ նա կանգնել եր նրանց առջև մատը բերանը դրած, չոած ու վախեցած աչքերով, փոքիկ, վտիտ, զղղված, ծեծված, վոր չեր հասկանում, թե ուր ե ինքը և ինչ են ուզում իրենից:

Ի՞նչ անել հիմա: Դատել սրան վորպես գողի: Փոքրիկը մեղք ե, հազիվ ե վոտքի կանգնում: Թե՞՛ բանտարկել:

— Ծեծել, պրծավ գնաց, — վճռեց տանուտերը:

Դատավորները հավանություն տվին տանուտերի խոսքին: Ու կանչեցին ծառա Ստախին:

— Վերցրու դրան և խրատիր:

Ստախը թափ ավեց իր բութ, գազանային գլուխը, առավ Յանկոյին թեկի տակ, ինչպես կատվի մի ձագ, ու տարավ ցախատուն:

Յանկոն կամ չհասկացավ. բանն ինչումն ե, կամ վախեցավ ու ձայն չհանեց: Նա, բռնված թռչունի պես, նայում եր միայն. Յեվ միթե կարող եր իմանալ, թե ինչ պիտի անեն իրեն:

Միայն յերբ Ստախը նրան յերեսն ի վայր մեկնեց ցախատանը և շապիկը բարձրացնելով թափ տվեց ուսերից, Յանկոն ձշաց.

— Մա-մա...

Ու յուրաքանչյուր հարվածից հետո կրկնում եր. «Մա-մա, մա-մա», բայց հետզհետե թույլ, նվազ և բարակ ձայնով: Մի հարված ևս—բոլորովին լռեց...

Կայ քեզ, ջարդված ջութակ...

## 8.

Յեվ ահա մայրն յեկավ յերեխային տանելու. ու տարավ նրան գրկած միայն. Հետևյալ որը Յանկոն տեղից չելավ, իսկ յերկրորդ որը յերեկոյան հանդարտ մեռնում եր յերկար նստարանի վրա, վերմակի տակ:

Թոշունները յերգում եյին. արևի շողերը ներս ընկան և վոսկեփայլ լուսով վողողեցին մանուկ Յանկոյի զզզզված վլուխն ու ցամաքած դեմքը: Նրա նիհար կուրծքը շնչում ե տակալին. կարծես ունկնդրում եր դեռ հեռվից յեկող ձայներին:

— Կանաչել են դաշտերը...

Յերգում եյին խոտհարքից վերադարձող աղջիկները. իսկ ավելի հեռվից սրինգն եր յերգում... Ու լսում եր Յանկոն: Նրա մոտ ընկած եր իր շինած ջութակը:

Նա ահա Յանկոյի դեմքը պայծառացավ հանկարծ. Նրա գունատ շուրթերը շշնչացին.

— Մամա...

— Ի՞նչ ե, վորդիս, ասավ մայրը:

— Մամա: Յերկնօքում կա իսկական ջութակ:


— Կա, վորդիս, կա,—պատասխանեց մայրը, ու ել վոչինչ չկարողացավ ասել. Նրա կուրծքը պայթում եր վշտից:

Նա յերեմն ի վայր ընկավ արկդին ու սկսեց ճշալ ինչպես խելագար, ինչպես մի մարդ, վոր տեսնում ե թե անկարող ե փրկել մահվան ձեռից իր հարազատին:

Ու փրկել ել չկարողացավ...

Յերբ նա գլուխը բարձրացնելով նորից նայեց Յանկոյին, փոքրիկ յերաժշտի աչքերը բաց, սառած եյին, իսկ յերկարած դեմքը՝ լուրջ և տխուր: Զբացել եր և արևի շողը...

Յանկոյի գլխավերեկ կեչիներն եյին խշում միայն...





Գիւն Ե 10-ԿՈՐ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0391678

5962

891. 850  
U-40